զաքին, պաշարեցան յերկիւղ մեծ, մի գուցէ յանկարծակի հասանիցին Լատինք 'ի վերայ նոցա, և մի խնայեսցեն 'ի մեծ և 'ի փոքր, որոյ վասն բազումք 'ի նոցանէ թողեալ զկահ եւ զկարասիս իւրեանց՝ փախստեայ գնացին 'ի քաղաքէ 'ի քաղաք՝ վաճառեալ զկենդինար ձիթոյ 10 դենարի։ Եւ զկնի միոյ տարւոյ եկ Մէլիք էլ Մուազզամ 'ի Դամասկոսէ, և հիմնայատակ կործանեալ աւերեաց խսպառ զքաղաքն Կեսարիա Պաղեստինացւոց։ (1221)։

Յետ տիրելոյ Լատինաց Տիմիաթի՝ եդին 'ի մսի տիրել բովանդակ երկրին Եգիպտոսի։ ուստի յառաջ խաղացեալ հասին 'ի Մանսուրա, ուր ընդ առաջ եկ նոցա բանակն այլազգեաց։ Եւ սկիզբն լինել պատերազմին՝ սաստկութեամբ հարան ընդ միմեանս 'ի ծովու եւ 'ի ցամաքի, յորում պարտեցան այլազգիք և բազումք եւս կոտորեցան։ Մէլիք Քեամիլ գրեաց առ եղբարս եւ առ ընտանիս իւր 'ի Դամասկոս հասանել 'ի Թիկուն։ Մէլիք էլ Մուազզամ տէրն Դամասկոսի, և եղբայր նորին Մէլիք Աշրաֆ, տէր արեւելեան քաղաքաց, միաբանեցան սոցա և այլ իշխանք և տեարք քաղաքաց և գաւառաց, և բազմութեամբ հասին առ Քեամիլ, սակայն չկարացեալ վճարել ինչ կոտորեցան բազումք։ ապա զմնաւ ածեալ զկորուստ զօրաց իւրեանց, խնդրեցին 'ի Լատինաց հաշտութիւն, դնելով դաշինս։ տալ նոցա զԵրուսաղէմ, զԱսկաղոն, զՏիրերիա, զԱւութիկէ, զՃիպիլէ, և զամենայն ծովեզերեայ քաղաքս, զորս առեալ էր Սալահատինի, բաց 'ի Քերեքայ և 'ի Շովպէքայ։ միայն Լատինք դարձուսցեն առ նոսա զՏիմիաթ։ Սակայն Լատինք ոչ ընկալան զայսոսիկ պայմանս, մանաւանդ պահանջէին 300,000 ոսկիս 'ի տուժ պարսպին Երուսաղէմի՝ զոր կործանեցին, նաեւ զՔերէք եւ զՇովպէք։ Զայս եւս ոչ առին յանձն այլազգիք, և խնդիր հաշտութեանն մնաց անորոշ։ Լատինք գրաւեալ էին զդաշտն Տիմիաթի եւ հատեալ զճանապարհս 'ի ծովու։ ուստի 'ի գիշերի նաւեալ այլազգեաց 'ի Նեղոսէ՝ եկին 'ի ցամաք, և յանկարծ երեւեցան 'ի մէջ Լատինաց և Տիմիաթի, եւ կալան զճանապարհն յորմէ գայր պաշար և օգնութիւն։ Լատինք տագնապեալ 'ի սովու խնդրեցին հաշտութիւն և զիջան յանձն առնուլ զառաջին պայմանս զոր խոսաս-